ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2024 թվականի N 2091 - Ա

ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԱԺՆԵՏՈՄՄԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԲԱԺՆԵՏՈՄՄԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածը, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասը, ինչպես նաև հաշվի առնելով «Միջազգային Ռադիոցանց» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի սեփականատերերի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Որպես նվիրատվություն Հայաստանի Հանրապետությանը՝ ընդունել «Միջազգային Ռադիոցանց» փակ բաժնետիրական ընկերության՝ բաժնետոմսերի սեփականատերերին պատկանող 100 (հարյուր) տոկոս բաժնետոմսերը՝ 100 (հարյուր) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսեր, 500 (հինգ հարյուր) դրամ անվանական արժեքով բաժնետոմսերը՝ դրանց կառավարման լիազորությունները վերապահելով Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը:

2. Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարին՝

1) ապահովել «Միջազգային Ռադիոցանց» փակ բաժնետիրական ընկերության հետ սահմանված կարգով բաժնետոմսերի սեփականատերերի հետ նվիրատվության պայմանագրի կնքումը.

2) բաժնետոմսերի նվիրատվության պայմանագրի կնքումից հետո մեկամսյա ժամկետում սեփականատերերի փոփոխության վերաբերյալ համապատասխան գրանցում կատարել բաժնետոմսերի ռեեստրը վարող մասնագիտացված կազմակերպությունում:

3. Սահմանել, որ բաժնետոմսերի փոփոխությունների հետ կապված ծախսերն իրականացվելու են նվիրաբերող ընկերության միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

27.12.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ